30 JUL 2010

Ա. ԽԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

636.04

848

ՀՂԻ ԿՈՎԻ

ԿԵՐԱԿՐԵԼՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

636.04
Ա-21

ԱԶԵՐՆԵՇՐ
Գյուղատնտ. բաժին
Բաղու—1935

636.04
21.03.2014
Կ-21

Խմբագիր Լ. Դանիելյան
Թողարկու և սրբագրիչ Ա. Արխան

Baş Mətbuat mydirligi Myvəkkilligi № 2718. Sifariş № 447. Tiraž 2500. Istehsalata verilmiş 13/V—35. Capa imzalanmış 21/V—35. Cap listi 1/4. Kağız formatı 82×110. Azərnəşr mətbəəsində basıldı. 26-lar adına „Kitab Sarayı" Bakı, Əli Bajramov küçəsi.

ՀՂԻ ԿՈՎԻ ԿԵՐԱԿՐԵԼՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ!

Կաթնատու անասունների ճիշտ զարգացման գործում բացի մատղաշները մեծացնելու, կաթնատու անասունները կերակրելու և խնամքի հիմնական խնդիրներից՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հղի կովի կերակրելու և խնամքի վրա։

Այս վերջին մոմենտի ճիշտ մոտենալուց է կախված հետագա կաթ տալու (laktacia) շրջանի նորմալ ընթացքը և վորոշ չափով նորածին հորթի առողջ դրությունը։

Հղի կենդանու ստացած սննդատու նյութերը գործադրվում են հորթի արգանդի շրջանի զարգացման համար։ Այդ պատճառով էլ բացի այն կերից, վոր ստանում է կովը իր գոյության և կաթ արտադրելու համար, անհրաժեշտ է տալ նրան նաև լրացուցիչ կեր արգանդի պտուղի համար։

Իր գոյության վեց ամսվա ընթացքում, սաղմը չափազանց դանդաղ է զարգանում և մեծ մասամբ նա ջրից է գոյացած լինում։ Արագ աճումը և զարգացումը նկատվում է միայն արգանդային շրջանի վերջին յեռամսյակում. դրա համար էլ կովի հղիության առաջին շրջանը հաշվի չի առնվում խարաբաժինը—(որաբաժինը) հատկապես սկսում են ավելացնել միայն ծնելուց 100—120 որ առաջ։

Կաթ տալու վերջին շրջանը կարելի յե համարել վորպես ինտենսիվ աշխատանքի շրջան, վորը պա-

JAN 2013

հանջում է կաթնատու կովի ամբողջ որգանիզմվ լարվածություն։ Դրա համար էլ ծնելու ժամանակ կովը իր որգանիզմի մեջ պետք է բավականաչափ սննդատու նյութե՝ի պաշար ունենա։

Եթե կովը կաթ տալու շրջանում գործադրի իր մարմնի սննդատու նյութերի մեծ մասը, և ծնելու համար չստանա համապատասխան նախապատրաստում, ապա կաթ տալու նոր շրջանում նա կազդուրված չի լինի։ Իսկ հետեվանքը այն կլինի, որ կենդանին կքայքայվի և կպակասացնի կաթնատվությունը։

Աշխատանքի փորձը և գործնական դիտումները— ցույց են տվել, որ այն կովը, որ ամբողջ հղիության շրջանում մինչև հորթի ծնելը նորմալ է կերակրված լինում, կարող է տալ շատ առատ կաթ և կաթնառատությունը տեվում է մինչև կաթ տալու շրջանը։ Այստեղից կարելի է յեզրակացնել, որ հղի կովը պետք է վերջին յեռամսյակում ոգտագործի հղիության համար վերջին յեռամսյակում տված լրացուցիչ կերի մի մասը՝ պահելով իր մարմնում որպես սննդատու նյութ։ Հղի կովի որական ընդհանուր խառաբաժինը, բացի այն կերից, որ նա ստանում է իր գոյությունը պահպանելու համար՝ յուրաքանչյուր կերային միավորի մեջ պետք է լինի 100 գրամ սպիտակուց։ Նայած կովի լավ սնվածության, այդ թիվը կարող է փոփոխվել։

Հղի կովը կերակրելու կարեվոր մոմենտներից մեկն է հանդիսանում նաև նրա որգանիզմը բավականին քանակությամբ հանքային նյութերով ապահովելը։ Հորթի վոսկորներն ամրանալու համար մեծ քանակությամբ կալցի և ֆոսֆոր է պահանջվում և յեթե այս նյութեր բացակայում են խարաբաժնում ապա կովի որգանիզմը խիստ կերպով քայքայվում

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА

Կ 66.61

և իր հերթին թուլացնում է հորթի կազմվածքը։

Հանքային նյութերի բացակայությունը անդրադառնում է նաև հետագա կաթ տալու շրջանի վրա։ Դրա համար էլ հղի կովի համար կեր ընտրելիս, առավելությունը պիտի տալ այն կերին, որի մեջ հանքային նյութեր։ ավելի շատ կան

Այսպիսի կեր է համարվում բակլային խոտը, որ շատ կա կալցի, քուսպը, որը իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ ֆոսֆոր, թեփը և այլն Այն դեպքում, յեթե այս կերը հնարավոր չե ձեռք բերել, իսկ յեթե կա էլ բայց վոչ բավարար քանակությամբ, արհեստական կերպով խառաբաժնի մեջ պետք է ավելացնել հանքային նյութեր, այն է կավիճ և վոսկրային ալյուր։ Յուրաքանչյուր որաբաժնի մեջ կարելի է խառնել 30—40 գրամի չափ կավիճ։

Վոսկրային ալյուր կարելի յե տալ միայն որվա ամբողջ խառաբաժնի մի տասերորդ մասի չափ։ Հղի կովի համար կեր ընտրելու ընդհանուր կանոնը կայանում է նրանում, որ առանձնապես ուշադիր վերաբերվել կերի վորակին։

Անպայման պետք է խուսափել հղի կովին անվորակ կեր տալուց, այլապես նա առաջացնում է ստամոքսի խանգարում, կապություն և ի վերջո կարող է առաջանալ վիժում։ Նույնը պետք է ասել և սիլոսի, վերաբերմամբ վորովհետև վերջինիս վորակը նույնպես յենթակա յե տատանումների, դրա համար էլ ավելի լավ է ծնից 30—35 որ առաջ չտալ այդ կերը։

Կովի ծնելուց 10—12 որ առաջ անհրաժեշտ է ուժեղ խառաբաժին չտալ, այլ տալ կովին կոշտ և ջրալի կեր վորպեսզի կովի մկանները և փորի հոդակապերը թուլանան, որը զգալի կերպով կհեշտացնի կովի ծինը։

Վորպեսզի կովը ծնելուց հետո չհիվանդանա՝ հարկավոր է զգուշությամբ մոտենալ նրան կերակրելու խնդրին. կովին սառը ջուր չի կարելի տալ, անհրաժեշտ է քիչ տաքացնել ջուրը տալ ծնից 2 3 ժամ անցնելուց հետո, վոչ ավել քան $^1/_2$ վեդրո։

Ծնելու առաջին որերը կովի կերակրելը վոչնչով չի տարբերվում մինչև նրա ծինը։ Յեթե կովի կուրծքը ամրանում, կոշտանում է, պետք է նվազացնել կովի խառաբաժինը։ 3—4 որ անցնելուց հետո, կարելի յե ավելացնել որական 300 գրամմի չափ ուժեղ կեր։ Կթան կովի հանքային նյութեր ստանալու պահանջը կաթ արտադրելու համար զուգադիպում է հորթի զարգացման համար նույն նյութերը ստանալու պահանջի հետ դրա համար ել խառաբաժնից չը-պետք է պակասացնել հանքային նյութերի ընդհանուր քանակը։

Հղի կովի խնամքի համար պետք է ասել հետեվյալը. 8—10 որ առաջ մինչեվ ծինը՝ կովին պետք է տեղափոխել ծննդարան։ Անհրաժեշտ է առանձին ուշադրություն դալ ՃՆել մաքրության վրա՝ հաճախ փոխելով կովի տակը։

Ծնից հետո կովի ազդրերը և կուրծքը պետք է լվանալ գոլ ջրով։ Ամեն որ հղի կովին պետք է ուղարկել ման գալու։

Հղի կենդանին պետք է մշտական հսկողության տակ լինի, դրա համար ել ծննդարանում պետք է մշտական հերթապահություն նշանակել։

Նկատի ունենալով, վոր հղի կովը պահանջում է առանձին հոգատար խնամք, դրա համար ել հղի կովին սպասարկող պերսոնալը պետք է ընտրել հուսալի և փորձված աշխատողներից։

ՀՀ Ազգային գրադարան
NL0282928

21.724

Գինը 5 կոպ.

ԱՍՍՀ
ԱՍՍՀ

ASŞC XTK

Booqaz inəjin saxlanılması və jemlənilməsi

AZƏRNƏŞR
Kent təsərrüfat şö'bəsi
Bakı — 1935